Տարվա լավագույն ֆուտբոլիստի քվեարկության կարգ

1. «Տարվա լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում քվեարկությանը կարող են մասնակցել

1. ԶԼՄ-ների ներկայացուցիչները (բացառությամբ ֆուտբոլային որևէ ակումբում աշխատող լրագրողների)

2. Fastex Պրեմիեր Լիգայի 2024-2025թթ. մրցաշրջանի մասնակից ակումբները (մեկ քվե)

2. «Տարվա լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում ցուցակի մեջ ընդգրկվում են՝

Օրացուցային տարվա ընթացքում Հայաստանի ազգային և տարբեր տարիքային հավաքականներում, ինչպես նաև իրենց ակումբներում, այդ թվում՝ արտերկրում, առավել աչքի ընկած ֆուտբոլիստները, որոնց թեկնածությունն առաջադրվում է ՀՖՖ-ի կողմից:

3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված ֆուտբոլիստների ցուցակը, որոնցից պետք է ընտրել լավագույն երեքին:

Ակումբների ներկայացուցիչները չեն կարող քվեարկել մրցաշրջանի ընթացքում/տվյալ պահին իրենց ակումբը ներկայացրած/ներկայացնող թեկնածուի օգտին: Քվեարկությունը պետք է ուղարկել thebest@ffa.am էլհասցեին՝ նշելով քվեարկության տարբերակը, անուն-ազգանուն, լրատվամիջոցի անուն, կցելով լրագրողական բեյջը և լուսանկարը:

4. Միավորների հաշվառումը կատարվում է ՀՖՖ Հաղորդակցության բաժնի կողմից՝ հետևյալ կարգով. 1-ին տեղ՝ 5 միավոր, 2-րդ տեղ՝ 3 միավոր, 3-րդ տեղ՝ 1 միավոր:

5. «Տարվա լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում քվեարկության արդյունքում առաջին տեղ զբաղեցրած ֆուտբոլիստը պարգևատրվում է «ոսկե» գնդակ մրցանակով և 4 միլիոն դրամով, երկրորդ տեղ զբաղեցրած ֆուտբոլիստը՝ «արծաթե» գնդակ մրցանակով և 3 միլիոն դրամով, երրորդ տեղ զբաղեցրած ֆուտբոլիստը՝ «բրոնզե» գնդակ մրցանակով և 2 միլիոն դրամով: